Այնուհետև ակադեմիկոս Վ. Հ. Համբարձումյանը հանգամանորեն կանգ առավ հանրապետությունում գիտության առանձին ճյուղերի զարգացման վրա, բնութագրեց Հայաստանի գիտնականների նվաճումները մաթեմատիկայի, ֆիզիկայի, աստղաֆիզիկայի, էլեկտրոնիկայի, հաշվողական տեխնիկայի, կենսաբանության, երկրաբանության, հասարակական գիտությունների բնագավառներում։

Ժողովում, հանդիսավոր իրադրության պայմաններում, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Ե. Քոչինյանը Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության, Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի և ՀԼԿԵՄ-ի հուշադրոշը հանձնեց ՀՍՍՀ գիտությունների ակադեմիային։

Ինձ, ասաց ընկ. Ա. Ե. Քոչինյանը, մեծ ուրախություն է պատճառում, որ այս տոնական օրը հուշադրոշ եմ հանձնում մեր ակադեմիային։ Հուշադրոշը առհավետ մնալու է ձեզ մոտ, խորհրդանշելով հանրապետության գիտնականների հոյակապ նվաճումները և ստեղծագործական քանքարը։

Անցած կես դարում հեքիաթային փոփոխություններ են կատարվել Սովետական Հայաստանում, նրա էկոնոմիկայի, կուլտուրայի, գիտության ասպարեզում և դրանում մեծ վաստակ ունի գիտությունների ակադեմիան։ Այսօր մենք խորին երախտագիտությամբ ենք տալիս մեր այն գիտնականների անունները, որոնք հաջողությամբ զարգացնում են սովետական գիտությունը, նրանց անունները, ովքեր լայնորեն հռչակված են ոչ միայն մեր հանրապետությունում, այլև նրա սահմաններից շատ հեռու։

Եթե մեզանից յուրաքանչյուրը հետադարձ հայացք գցի անցյալին, ապա վերստին կհամոզվի, թե սովետական իշխանության տարիներին ինչպիսի հսկայական ճանապարհ է անցել Հայաստանը, ինչպիսի բարձր մակարդակի է հասել կյանքի բոլոր բնագավառներում։ Թույլ տվեք մի անգամ ևս շնորհավորել մեր գիտնականներին և նրանց հաջողություններ մաղթել ի բարօրություն սոցիալիստական հայրենիքի։

Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանը ջերմորեն շնորհակալություն հայտնելով բարձր պարգևի համար, ասաց, որ հուշադրոշը հանրապետության գիտնականներին պարտավորեցնում է ավելի շատ աշխատել՝ ի փառս սովետական գիտության։

ՀՍՍՀ ԳԱ ընդհանուր ժողովը մեծ ոգևորությամբ ընդունեց ողջույնի նամակ՝ հասցեագրված ՍՄԿԿ Կենտկոմին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը և ՍՍՀՄ Մինիստրների սովետին, հավաստիացնելով, որ Հայաստանի գիտնականները բոլոր ջանքերը կգործադրեն սովետական գիտության հետագա զարգացման համար։

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐ

Հոկտեմբերի 27-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի հոբելյանական նստաշրջանը՝ նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության 50-ամյակին։

Ներածական խոսքով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանը։

— Մարդկության պատմության տարեգրությունը,— ասաց նա,— չգիտե ավելի նշանակալից դեպք, քան Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։ Որքան ժամանակը հեռացնում է մեզ 1917 թվականի հոկտեմբերի իրադարձություններից, այնքան վեհ և պանծալի է հնչում նրանց նշանակությունը մարդկության պատմության համար։ Անցած 50 տարիների ընթացքում մեր աչքերի առաջ տեղի է ունեցել վիթխարի շրջադարձ՝ մեր մոլորակի վրա ապրող ժողովուրդների մեծ մասը ընդգրկվել է այդ շարժման մեջ և այսօր մարդկային հասարակության պատմության բնորոշ օրինաչափությունն է՝ անցում դեպի անդասակարգ հասարակարգը դեպի կոմունիզմ։

Հատկապես մեծ է Հոկտեմբերի նշանակությունը հայ ժողովրդի համար։ Մեծ եղեռնից հետո թվում էր, թե հայությունը ընդմիշտ կորցրեց իր հայրենիքը, սակայն Հոկտեմբերը եկավ ոչնչացումից և փրկեց հայ ժողովրդի սպառազանց։ «Եթե հեղափոխությունը չլար,— ասել է մեծ վարպետ Ավետիք Իսահակյանը,— հայ ժողովուրդն իր հայրենիքի մեջ պիտի հալվեր, ոչնչանար, արհամարհելի փոքրամասնություն պիտի դառնար»։ Շնորհիվ մեծ Հոկտեմբերի հնարավոր եղավ կորստից փրկել Հայաստանի մի մասը և այնտեղ հաստատել սովետական իշխանություն։ Այնուհետև Սովետական Հայաստանը դարձավ աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի փարոսը, նրա ավետյաց երկիրը, նրա ազգային պետությունը և մեր ժողովրդի ազգամիավորման կենտրոնը։

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Խ. Հ. Բարսեղյանը «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և հայ ժողովրդի վերածնունդը» զեկուցման մեջ փաստական հարուստ նյութերի և արժեքավոր եզրահանգումների միջոցով ցույց տվեց մեծ Հոկտեմբերի ազատարար դերը ժողովուրդների, այդ թվում՝ հայ ժողովրդի ազատագրման և վերածննդյան գործում։ Հայ ժողովուրդը իր բախտը սերտորեն կապելով ռուս մեծ ժողովրդի, համառուսական պրոլետարիատի հետ, լենինյան կուսակցության առաջնորդությամբ ընթացավ Հոկտեմբերի ուղիներով, ձեռք բերեց ազատություն և խաղաղություն։ Սովետական Հայաստանը մեծ Հոկտեմբերի ծնունդն է։ Պատմական կարճ ժամանակամիջոցում լիովին կերպարանափոխվել է հանրապետության դեմքը։

Զեկուցողը պերճախոս փաստեր է բերում Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության, կուլտուրայի, գիտության և այլ ասպարեզներում ունեցած վիթխարի հաջողությունների մասին, մասնավորապես արդյունաբերության, գիտության և կուլտուրայի բնագավառներում. նա հանգամանորեն ցույց տվեց Սովետական Հայաստանի հաջողությունները, միաժամանակ նշեց, որ պատմական այլ բախտ վիճակվեց Արևմտյան Հայաստանին։

Զեկուցման մեջ զգալի տեղ է տրված Հայաստանում հեղափոխական շարժումների ծավալման, սովետական կարգերի հաստատման և այլ պրոբլեմների պատմագրությանը, այդ ուղղությամբ բուրժուական կեղծարարների քննադատությանը։

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր Հ. Գ. Ասլանյանի զեկուցումը պատմա-փիլիսոփայական պոլեմիկա էր ժամանակակից հակամարքսյան կոնցեպցիաների դեմ՝ Հոկտեմբերյան հեղափոխության բնույթի և պատճառների առնչությամբ։ Զեկուցողը նշեց, որ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության պատճառների ու նախադրյալների, նրա բնույթի ու նշանակության, համաշխարհային պատմության ընդհանուր օրինաչափությունների հետ նրա ունեցած առնչության հարցերը մշտապես գտնվել ու գտնվելու են մարքս-լենինյան փիլիսոփայության ուշադրության կենտրոնում։ Սակայն այլ կերպ են մոտենում հակակոմունիզմի գաղափարախոսները, մարքսիզմի անբարիշտ հակառակորդները։ Քննարկելով սոցիալիստական հեղափոխության և համաշխարհային սոցիալիստական սիստեմի հետ կապված եղելություններն ու տեսական պրոբլեմները նրանք ամեն կերպ ձգտում են կեղծել մարքսիզմ-լենինիզմի ուսմունքը, Հոկտեմբերի մարդասիրական մեծ իդեալները։

— Հոկտեմբերյան հեղափոխության բնույթի, նշանակության, հետևանքների շուրջը կոմունիզմի և հակակոմունիզմի միջև հայացքների բախումները,— ասաց Հ. Գ. Ասլանյանը,— պատահական չեն։ Այդ հեղափոխությունը պատմության դիալեկտիկայի մեծագույն ակտը լինելով, բաց արեց մարդկության ու քաղաքակրթության պատմության նոր դարաշրջան՝ կապիտալիզմի կործանման ու կոմունիզմի հաստատման դարաշրջանը, հասարակության զարգացումը շուռ տվեց դեպի ժողովրդական մասսաների տնտեսական, սոցիալական, քաղաքական ու հոգևոր ազատագրումը, ամեն տեսակի ճնշման ու շահագործման վերացումը։ Մեծ հեղափոխությունը պատմական ինքնուրույն ստեղծագործությանը բարձրացրեց ոչ միայն Ռուսաստանի ժողովուրդներին, այլև միլիոնավոր մարդկանց ամբողջ աշխարհում։ Հոկտեմբերը վիթխարի խթան հանդիսացավ հասարակական մտքի բոլոր բնագավառների զարգացմանը, խորտակեց հին փիլիսոփայական, սոցիոլոգիական, բարոյական ու իրավական թեզիսները, հաստատեց ու հարստացրեց պատմական պրոցեսի գիտական, մարքսիստական ըմբռնումը։

Այնուհետև զեկուցողը մերկացնում է լենինյան տեսության հակառակորդներին (Ա. Մեյեր, Ջ. Սեբայն, Ռ. Դենիելս, Կ. Հանտ, Ֆոն Ռաուխ և այլն), որոնք ամեն կերպ փորձում են խեղաթյուրել Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության մեծ նշանակությունը մարդկության առաջադիմության համար։ Սակայն, ընդգծում է զեկուցողը, կոմունիզմի պատմությունն ու համաշխարհային պատմական հաղթանակները, ինչպես տեսության, այնպես էլ կյանքի վերափոխման բնագավառում, այդ հերյուրանքների համոզիչ պատասխանն են։

Գիտական նստաշրջանում «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ազդեցությունը Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի վրա» զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ ԳԱ արևելագիտության սեկտորի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու Հ. Գ. Ինճիկյանը։

— Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը,— ընդգծեց Հ. Գ. Ինճիկյանը,— իր մասշտաբներով ու խորությամբ մի այնպիսի համաժողովրդական շարժում էր, որտեղ ոչ միայն ապահովված էին պրոլետարիատի ղեկավարությունը և Ռուսաստանի բազմամիլիոն գյուղացիության մասնակցությունը, այլև ազգային փոքրամասնությունների, ճնշված ազգերի ու ժողովուրդ-

ների գործնական օգնությունն ու ակտիվ մասնակցությունը։ Հոկտեմբերը՝ ազգային-ազատագրական պայքար էր ռուսական ռազմա-ֆեոդալական իմպերիալիզմի դեմ, որը շատ հասկանալի ու մոտ էր, մասնավորապես Արևելքի ժողովուրդների ողուն։ Սովետական կառավարության կողմից ընդունված «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», ՌՍՖՍՀ Ժողկոմխորհի 1917 թ. դեկտեմբերի 3-ի դիմումը՝ «Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մահմեդականներին» և բազմաթիվ այլ փաստաթղթեր ու որոշումներ խոսում էին ժողովուրդների ազատության, ինքնուրույնության, իրավահավասարության, անկախության, նրանց ազատ ինքնորոշման, ազգային ու կրոնական արտոնությունների և սահմանափակումների վերացման, ազգային փոքրամասնությունների ու առանձին էթնիկական միավորումների ազատ զարգացման ու մի շարք ուրիշ կենսական ու հրատապ հարցերի մասին։

Տասնյակ տարիներով ու դարերով գաղութային ճնշման տակ հեծող ժողովուրդները առաջին անգամ էին լսում ու տեսնում այնպիսի երևույթներ, որոնց մասին նրանք երազել էին միայն, պայքարել և արյուն թափել, առանց հասնելու որևէ դրական արդյունքի։ Ահա թե ինչու, նշում է զեկուցողը, հաղթահարելով հսկայական դժվարություններ, Արևելքի առաջավոր գործիչները շտապում էին պատմել իրենց ժողովուրդներին Հոկտեմբերի, Լենինի, սովետական երկրի մասին։

Հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում անմիջական արձագանք գտավ Եվրոպայում ու Ամերիկայում, Աֆրիկայում և Ասիայում։ Բարձրացավ բանվորական ու ազգային-ազատագրական շարժումների մի հզոր ալիք, որը անհետևանք չմնաց մի շարք պետությունների ու ժողովուրդների կյանքում։ Արդեն 1917 թ. վերջերին և 1918 թ. գաղութային բազմաթիվ երկրներում ծայր են առնում ժողովրդական շարժումներ։ Հաջորդ, 1919—1920 թթ. շարժման վերելքը ընդգրկեց Ասիայի և Աֆրիկայի կարևոր երկրները։

Այնուհետև Հ. Գ. Ինճիկյանը իր զեկուցման մեջ հանգամանորեն կանգ առավ գաղութատիրության փլուզման, Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման, գաղութատիրությունից ազատագրված պետություններին Սովետական Միության կողմից ցույց տրվող օգնության և այլ հարցերի վրա։

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

* * *

Այս տարվա հոկտեմբերի 26-ին տեղի ունեցավ Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական նստաշրջանը՝ նվիրված Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության կեսդարյա հոբելյանին։ Նստաշրջանը ներածական ընդարձակ խոսքով բացեց ինստիտուտի դիրեկտոր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Գալոյանը։

Պատմությունը,— ասաց նա,— հարուստ է արժանահիշատակ բազում իրադարձություններով, բայց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը աշխարհի ժողովուրդների ճակատագրի վրա գործած ազդեցությամբ հավասարը չունի։ Մեծ հոկտեմբերի հիսնամյակի շեմին սովետական ժողովուրդները վերանայում-ամփոփում են անցած ուղու մաքառումները և վաստակները՝ հանրագումարի բերում մեր երկրի փառապանծ տարեգրությունը։ Այդ տարեգրության մեջ իր արժանի էջերն է կերտել և հայ ժողովուրդը։ Կերտել է սիրով ու հավատով — հայացքն հառած գալիքին։

Լինելով ժողովրդի անցյալի արտացոլումը, սովետահայ պատմագրությունն էլ պիտի դրսևորեր և դրսևորել է սովետական հայ ժողովրդի հոգևոր վերածննդի ամբողջական հոսքը։

Հոետորը նշեց պատմագիտության այն գլխավոր նվաճումները, որ ձեռք են բերել հանրապետության, մասնավորապես ինստիտուտի պատմաբանները, հայ ժողովրդի պատմության բազմաթիվ պրոբլեմների ու թեմաների մարքսիստական մշակման ուղղությամբ, ցույց տվեց աշխատանքներում տակավին տեղ գտած թերությունները, ինչպես նաև առաջադրեց հնարավորային մի շարք խնդիրներ։ Նա հանգամանորեն կանգ առավ այն պրոբլեմների վրա, որ առաջիկա տարիներին պետք է լուծվեն ինստիտուտի գիտնականների միասնական ջանքերով։

Նստաշրջանում կարդացվեց գիտական հինգ զեկուցում։ Առաջինը հանդես եկավ Հանրապետության ԳԱ ակադեմիկոս Աշ. Հովհաննիսյանը։ Բազմավաստակ պատմաբանի զեկուցումը նվիրված էր «Հայ ազգային-ազատագրական շարժումների պատմական օրինաչափությունների հարցին»։ Մանրանալով արևմտահայ ազգային-ազատագրական շարժմանը մասնակցած հայ քաղաքական խմբավորումների ծագման և կազմավորման պրոբլեմի վրա, գիտնականը մասնա-

վորապես մատնանշեց գաղափարական այն նահանջը, որ համառուսաստանյան ռեակցիայի պայմաններում կատարում էր արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը ղեկավարելու նախապատրաստվող հայ դեմոկրատական միտքը՝ հրաժարվելով XIX դարի 60-ական թվականների Ռուսաստանի հեղափոխական նարոդնիկական դիրքերից և որդեգրելով 80-ական թվականների արևելահայ ազգային-նարոդնիկական խմբավորումների և 80—90-ական թվականներին ձևավորված հայ ազգային-քաղաքական կուսակցությունների ազգային-քաղաքական դիրքավորումն ու մտահայեցությունը։ Եթե մինչև 80-ական թվականների կեսերը, ճիշտ կերպով բանաձևում է գիտնականը, արևելահայ ազգային-նարոդնիկական խմբավորումներն անցյալից եկող դեմոկրատական տրամադրությունների իներցիայով դեռ շարունակում էին դիմադիր վերաբերմունք ունենալ Անդրկովկասում ցարիզմի վարած գաղութատիրական քաղաքականության նկատմամբ և այս կամ այն չափով արտացոլում հայ մանր արտադրողների և ապրանքատերերի տեղական շահախնդրությունները, ապա 80-ական թվականների երկրորդ կեսից ի վեր, ելնելով համազգային բնույթ ստացած արևմտահայ շարժման խնդիրներից և հայկական հարցի լուծման միջազգային-դիվանագիտական ասպեկտներից, նրանք հրաժարվում էին անդրկովկասյան դեմոկրատիայի անմիջական խնդիրներից և ցարիզմի դեմ հեղափոխական ակտիվ պայքար մղելու նպատակադրումներից։

Ելնելով լենինյան այն դրույթից, որ համադեմոկրատական սմեն մի հեղափոխության հիմնական խնդիրը ֆեոդալական իշխող հանրակարգը լուծելու և համաժողովրդական պայքարի ճանապարհով քաղաքական իշխանություն նվաճելու խնդիրն է, զեկուցողը իրավացիորեն Արևմտյան Հայաստանի նկատմամբ նման նպատակամղումներ չի տեսնում ո՛չ արևելյան ազգային-նարոդնիկական մանր խմբավորումների, ո՛չ էլ նրանց հաջորդած հնչակյան և դաշնակցական կուսակցությունների գործելակերպում։ Միայն արևելահայ իրականության ներսում հեղափոխական մարքսիստներն էին, վերջում ասում է նա, որ ամուր կանգնած բանվորական շարժման միջազգային դիրքերի վրա, կարողացան ճիշտ կողմնորոշել հայ աշխատավոր զանգվածների ազատագրական ոգորումները և հանգրվանելով Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության ափին, փրկության փարոս վառել նաև իրենց արևմտահայ եղբայրների աշխարհալած խլյակների առաջ։

«Հայաստանում սովետական իշխանության հաստատման և սոցիալիստական շինարարության պատմության ուսումնասիրության հարցին» էր նվիրված ինստիտուտի սովետական հասարակության պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Հակոբյանի զեկուցումը։

— Հայ ժողովրդի սովետական շրջանի պատմությունը,— ասաց նա,— դա ամենից առաջ Հայաստանում սովետական իշխանության համար մղված պայքարի, ժողովրդական տընտեսության վերականգնման, սոցիալիստական ինդուստրացման, գյուղատնտեսության կոլեկտիվացման, սոցիալիստական հասարակության կառուցման համար ծավալված պայքարի, վերածնված ու ծաղկած հայ մշակույթի պատմությունն է։ Հայ ժողովրդի սովետական շրջանի պատմության գիտական մշակման ուղղությամբ հսկայական աշխատանք է կատարվել։ Լույս են տեսել տասնյակ աշխատություններ, որոնցում լուսաբանվել են այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են՝ մայիսյան հերոսական ապստամբությունը, սոցիալիստական ինդուստրացումն ու կոլեկտիվացումը, քաղաքաշինարարությունը, ժողովրդի կյանքում կատարված սոցիալ-տնտեսական տեղաշարժերը և այլն։ Ճիշտ լուսաբանություն են ստացել ԽՄԿԿ հնագույն ջոկատներից մեկի՝ Հայաստանի կոմկուսի գլխավորությամբ սովետական իշխանության տարիներին արդյունաբերության և գյուղատնտեսության ասպարեզում հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումները, բանվոր դասակարգի և գյուղացիությունն դաշինքի ամրապնդման ուղղությամբ կատարած աշխատանքը։ Վերջում զեկուցողը կանգ առավ այն հիմնական պրոբլեմների վրա, որոնց ուղղությամբ առաջիկա տարիներին պետք է աշխատեն սովետական հասարակության պատմության ուսումնասիրողները։

Հոկտեմբերյան ժամանակաշրջանում Հայաստանի միջնադարյան պատմության ուսումնասիրության հարցին էր նվիրված պատմական գիտությունների դոկտոր Լ. Բաբայանի զեկուցումը։ Նա շոշափեց հայ կղերա-ֆեոդալական և բուրժուական պատմագրության թողած ժառանգության վերանայման ու վերագնահատման ուղղությամբ սովետահայ պատմագրության նվաճումների և հետագա անելիքների հետ առնչված բազմաթիվ հարցեր։ Մանրամասն խոսելով միջնադարյան Հայաստանի պատմության ուսումնասիրման բնագավառում վերջին տասնամյակների հայ պատմագրության հայոդությունների մասին, զեկուցողը միաժամանակ ներկաների ուշադրությունը

սեեռեց մի շարք բացատների վրա։ Նա անմխիթար համարեց մասնավորապես Հայաստանի և հայ ժողովրդի XV—XVII դարերի պատմության ուսումնասիրության վիճակը։

Հայ ժողովրդի հին պատմության ուսումնասիրման բնագավառում սովետահայ պատմագրության նվաճումներին էր նվիրված պատմական գիտությունների դոկտոր Գ. Մարգսյանի զեկուցումը։ Կանգ առնելով սովետահայ պատմագրության մեջ հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, Հայաստանի սոցիալ-տնտեսական կարգերի և քաղաքական պատմության լուսաբանման ուղղությամբ ձեռք բերած նվաճումների վրա, նա միաժամանակ արժանվույն գնահատեց այն թանքերը, որ կատարվել են աղբյուրագիտական բազայի ընդլայնման գործում։ Զեկուցողը վերջում նշեց, որ Հայաստանի հին պատմություն համակողմանի, խորությամբ և լայնությամբ ուսումնասիրելու համար հարկավոր է ամենից առաջ հոգատար վերաբերմունք ունենալ երիտասարդ կադրերի պատրաստման գործին։

Դարեր շարունակ արևելյան և արևմտյան բռնակալների տիրապետության տակ հեծող հայ ժողովրդի մի ստվար հատվածը իր ֆիզիկական գոյությունը պահպանելու համար՝ ստիպված արտագաղթել է հայրենիքից և դեղերել օտար երկնքների ներքո, բնակություն հաստատել երկրագնդի տարբեր անկյուններում։ Սովետահայ պատմագրություն մինչև վերջերս անհրաժեշտ ուշադրություն չէր դարձնում հայ ժողովրդի պատմության անքակտելի և բաղկացուցիչ մասը կազմող հայ գաղթավայրերի պատմության բազմակողմանի ուսումնասիրությանը։ Հայ գաղթավայրերի ուսումնասիրության արդի վիճակին և հետագա խնդիրներին էր նվիրված «Հայ գաղթավայրերը սովետահայ պատմագրության մեջ» զեկուցումը, որով հանդես եկան պատմական գիտությունների թեկնածուներ Վ. Ոսկանյանը և Վլ. Բարխուդարյանը։ Դրանով գիտական նստաշրջանն ավարտեց իր աշխատանքը, այն պարզորոշ կերպով ակնարկ դարձրեց, որ պատմագրությունը պետք է դառնա հայագիտության լրատար վտակներից մեկը։

Ն. ԱԱՐՈՒԽԱՆՅԱՆ